ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՈՆՋՈՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԱԼԲԵՐՏԻ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԺԹ.00.05 - <<Զարգացման և կրթության հոգեբանություն>> մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝
Մարիանա Սամվելի Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝
Վլադիմի Սևանի Կարապետյան

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝
Հասմիկ Սոսի Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026թ.-ի հուլիսի 17-ին ժամը 12:00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ.-ի հունիսի 17-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝  **Կամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում՝ հասարակության սրընթաց պայմաններում ավելի է կարևորվում երեխաների բազմակողմանի զարգացումը, համակարգային գիտելիքի հայեցակարգի ըմբռնումը, ընկալունակության բարձրացումը, ինչպես նաև հոգեկան և հուզական ներդաշնակության ձևավորումը: Մինչդեռ կյանքի տեմպը, սոցիալ-տնտեսական իրավիճակը, աշխարհում խնդիր դարձած ուսմնառության հանդեպ ցանկության կամ դրդապատճառը առաջնահերթ է, որպեսզի ձևավորվի այլընտրանքային հոգեբանա-մանկավարժական այնպիսի մոտեցում, որը կենթադրի կրթական գործընթացում որոշակի բարեփոխումների ներդրում: Այն մեծապես գալիս է հեռուստատեսությունից, համացանցից, որը երեխայի համար ավելի հետաքրքրական է թվում և ունակ է ծածկել անգամ ծնողների և ուսուցիչների կողմից ստացվող գիտելիքների հոսքը:

Հետազոտության օբյեկտը՝ Կրթական գործընթացներում արդյունավետ հոգեբանական զարգացնող մեթոդները:

Հետազոտության առարկան է ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդի արդյունավետությունը երեխաների բազմակողմանի հոգեկան զարգացման գործում:

Հետազոտության նպատակն է փորձարարական ճանապարհով բացահայտել "Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդի'' կիրառման տարիքային հնարավորությունները երեխաների բազմակողմանի զարգացման հարցում:

Առաջադրված խնդիրները՝

1. Ուսումնասիրել մասնագիտական գրականություն կրթական գործընթացների արդյունավետությունը պայմանավորող մեթոդների վերաբերյալ:
2. Ուսումնասիրել նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ճանաչողական գործընթացները և հուզական ոլորտը փորձարարական ճանապարհով:
3. Մշակել, իրականացնել ուսումնական ծրագիր «Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական» մեթոդով:
4. Համեմատական վերլուծության ենթարկել նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների անձնային առանձնահատկությունները և միջանձնային հարաբերությունները «Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական» մեթոդի կրառությունից հետո:
5. Այլ մեթոդների կիրառմանը զուգահեռ իրականացնել ռեթեստավորում:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ «Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական» մեթոդով ուսուցման կազմակերպումը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում իրական հնարավորություն է ստեղծում երեխաների ճանաչողական գործընթացների, անձնային առանձնահատկությունների, հուզական վիճակի և միջանձնային հարաբերությունների զարգացման, ինչպես նաև ինտերնետ կախվածության հաղթահարման համար:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը և մեթոդներն են:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել Ֆրիդրիխ Ֆրյոբելի, Ռոբերտ Ուենի, Մարիա Մոնտեսորիի, Ռեջիո Էմիլիայի, Ռ. Շտայների (Վալդորֆյան մոտեցում), ինչպես նաև զարգացման բիհեվյորիստական (Ուոթսոնը, Բ. Ֆ. Սքինները, Է. Թորնդայկը, Ի. Պ. Պավլովը), կոգնիտիվիստական (Հ. Էբբինգհաուսը, Ռ. Աթկինսոնը, Ժան Պիաժեի) և կոնստրուկտիվիստական (Լ. Վիգոտսկին, Լ. Վ. Զանկովը, Դ. Բ. Էլկոնինը, Վ.Վ.Դավիդովը) մոտեցումները, ուսուցման կազմակերպման հիմանական սկզբունքներն ու տեսությունները:

Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ճանաչողական գործընթացների ուսումնասիրության համար կիրառվել են հետևյալ **մեթոդները՝** դիտում, մաթեմեմատիկական վիճակագրական մեթոդը, թեստերի մեթոդը՝ ''Հիշիր թվերը'', ''Հիշիր պատկերները'', ''Գտիր և ջնջիր'', ''Լանդոլտի օղակները'', Ռավենի «Գունավոր պռոգրեսիվ մատրիցաները», Տոռենսի կրեատիվության թեստը /Վիլիամսի մոդիֆիկացված տարբերակը/, Ռ. Բ. Կետտելի ''Բազմագործոն անձնային հարցարանի'' մանկական տարբերակը, Ռոզենցվեյգի ''Ագրեսիվության մակարդակի ախտորոշման'' և Ռ. Թեմփլի, Մ. Դորկիի, Վ. Ամենի «Ընտրիր համապատասխան դեմքը» մեթոդիկաները:

Հետազոտության մեջ ընդգրկել ենք նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի 690 երեխա՝ 330 տղա, 360 աղջիկ:

Հետազոտության տեսա-գործնական նշանակությունը: Կատարված ուսումնասիրության տեսական նշանակությունն այն է, որ բացահայտված հոգեբանական օրինաչափությունները և մոտեցումները հարստացնում են ուսումնական գործընթացում երեխաների անձի և վարքագծի մասին գիտական պատկերացումները, ինչպես նաև ճանաչողական ոլորտի, անձնային, հուզական և միջանձնային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունների, ինչպես նաև այլ հոգեբանական օրինաչափությունների բացահայտումը հնարավորություն է տալիս զինել ծնողներին, դաստիարակներին, մանկավարժներին հոգեբանական գիտելիքներով:

Հետազոտության գիտական նորույթը: Իրականացված հետազոտությունը որոշակի նորույթ է ինչպես զարգացման և կրթության հոգեբանության, այնպես էլ սոցիալական, ընդհանուր (ընդունակությունների, անձի և միջանձնային հարաբերությունների), հոգեբանության բնագավառներում: Մի կողմից՝ գիտական մենագրական հետազոտության առարկա է դարձել երեխաների տարբեր ոլորտների՝ ճանաչողական, անձնային և միջանձնային հարաբերությունների, հուզական ոլորտի զարգացման ընթացքը, մյուս կողմից՝ գիտական ուսումնասիրության խնդիր է դարձել կրթության դերը վերջիններիս զարգացման գործում: Առաջին անգամ <<Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական>> դասավանդման մոդելը դիտարկվում է որպես երեխայի անձի բազամակողմանի զարգացման միջոց:

Հետազոտության փորձագիտությունը և տվյալների հուսալիությունը: Հետազոտության իրականացման ընթացքն ու ստացված

արդյունքները պարբերաբար քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կիրառական հոգեբանության ամբիոնում, ԱՄՆ-ի <<Մաթեմատիկայի ռուսական դպրոցում>>, <<River east>> դպրոցում, <<Զանգակ>> ամառային դպրոցում, <<Սիմֆոնի Մոնտեսորի>> դպրոցում, 2024թ.-ի Գավառի պետական համալսարանի ամենամյա՝ 27-րդ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Գիտակրթական Միջազգային կենտրոնի կողմից կազմակերպվող <<Հետազոտահեն կրթության արդի մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները>> գիտաժողովներում զեկուցվել է աշխատանքի գիտագործնական որոշ դրույթների մասին, ինչպես նաև 2026 թվականին Հայ-Ռուսական սլավոնական համալսարանի կողմից կազմակերպված <<Անձի հոգեբանության արդի հարցերը՝ ինքնություն և ադապտացիա>> վերտառությամբ գիտաժողովում ներկայացվել է հիմնական գաղափարները:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Կրթական գործընթացների արդյունավետությունը պայմանավորող մեթոդները ինչպես մանկավարժության, այնպես էլ հոգեբանական գիտության մեջ պատմական տարբեր ժամանակաշրջաններում առաջադրվել և զարգացվել են, սակայն դրանք կրել են մեկուսացած բնույթ, այսինքն Մոնտեսորին, Ռեջիո Էմիլիոն, Վալդորֆյան մոտեցումները գործել են առանձին առանձին, այնպես ինչպես բիհևյորիստական մոտեցումը, կոգնիտիվիստականը և կոնստրուկտիվիստական մոտեցումները:
2. Կրթական գործընթացների արդյունավետությունը պայմանավորող հիմնական մեթոդը եղել է ավանդական ուսուցումը, իսկ այլ կրթական մոտեցումները դիտարկվել են որպես այլընտրանքային:
3. Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ճանաչողական որոշ գործընթացները զարգանում են ավանդական ուսուցման ընթացքում՝ հիշողություն, ուշադրության արդյունավետություն, ուշադրության կայունություն, սակայն ստեղծագործական ընդունակությունները հակառակը՝ ունեն բացասական շարժընթաց: Հուզական ոլորտում նույնպես նկատվում է ագրեսիվության, տագնապայնության աճ:
4. Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների անձնային առանձնահատկությունների և միջանձնային հարաբերությունների ոլորտում նկատվում է բացասական շարժընթաց՝ երեխաները հակված են մեկուսանալու, հետաքրքրվածությունը թույլ է ուսման հանդեպ, հուզականորեն գրգռվող են, անվստահ, ունեն ինքնակառավարման դժվարություններ:
5. <<Ինտեգրված հոգեբանա-մանակավարժական>> մեթոդի կիրառումը առավել արդյունավետ է նպաստում ճանաչողական գործընթացների, մասնավորապես՝ ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:

6. <<Ինտեգրված հոգեբանա-մանակավարժական>> մեթոդի կիրառումը դրական է ազդում անձնային որոշ առանձնահատկությունների՝ ինքնակառավարում, խոհեմություն, հուզական կայունություն, անկախություն, ինչպես նաև հուզական ոլորտի վրա՝ նկատվում է ագրեսիվության և տագնապայնության թուլացում, ինչպես նաև օգնում է հաղթահարել կախվածությունը ինտերնետ խաղերից:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից, 2 աղյուսակից և 24 գծապատկերից: Ծավալը կազմում է 118 տպագիր էջ, առանց հավելվածի՝ 172 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, հետազոտության ընտրակազմը, ընտրված մեթոդիկաները, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ատենախոսական աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների կրթական գործընթացների արդյունավետության զարգացման պատմական ակնարկ»**, բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «Կրթական գործընթացների զարգացման պատմական ակնարկ» ենթագլխում ներկայացված է պատմական տարբեր ժամանակահատվածում հոգեբանա-մանկավարժական գործունեություն ծավալած այն հեղինակների հիմնական տեսությունները՝ Ֆրիդրիխ Ֆրյոբել, Ռոբերտ Ուեն, Մարիա Մոնտեսորի, Ռեջիո Էմիլիա, Ռ. Շտայներ (Վալդորֆյան մոտեցում), որոնց գաղափարներն ու սկզբունքները մեթոդաբանական հիմք են հանդիսացել <<Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական>> մեթոդի ստեղծման և կիրառման համար:

Առաջին գլխի երկրորդ՝ «Զարգացնող ուսուցման տեսությունները» ենթագլխում ներկայացված և վերլուծության է ենթարկված զարգացնող ուսուցման տեսությունները՝ բիհևյորիստական՝ Ուոթսոն, Բ. Ֆ. Սքիներ, Է. Թորնդայկ, Ի. Պ. Պավլով, կոգնիտիվիստական՝ Հ. Էբբինգհաուս, Ռ. Աթկինսոն, Ժան Պիաժե և կոնստրուկտիվիստական մոտեցումները՝ Լ. Վիգոտսկի, Լ. Վ. Զանկով, Դ. Բ. Էլկոնին, Վ.Վ.Դավիդով:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում քննարկվում են նախադպրոցական տարիքի հոգեբանական բնութագիրը, այս տարիքին վերաբերվող տեսությունները և զարգացման առանձնահատկությունները:

Առաջին գլխի չորրորդ ենթագլխում քննարկվում են կրտսեր դպրոցական տարիքին վերաբերվող հոգեբանական բնութագրիչները, տարիքային տեսությունները, զարգացման առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդի փորձարարական հետազոտություն»** գլխում ներկայացված են իրականացված հետազոտությունների ընթացքը և ստացված տվյալների վերլուծությունը, որոնց արդյունքները զետեղված են բազմաթիվ աղյուսակներում և գծապատկերներում:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին՝ «Հետազոտության կազմակերպումը եվ մեթոդիկան» ենթագլխում, ներկայացված են հետազոտության իրականացման տրամաբանությունը, ռազմավարությունը, մեթոդները ու ներգրավված ընտրակազմը: Մանրամասն ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված մեթոդների և մեթոդիկաների էությունը, նպատակահարմարությունը և բնութագրերը:

Մեր ուսումնասիրություններում ընդգրկել ենք նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի 690 երեխա՝ 330 տղա, 360 աղջիկ: Երեխաները եղել են Մաթեմաթիկայի ռուսական դպրոցի, <<River east>> դպրոցի, <<Հանգակ>> ամառային դպրոցի, <<Սիմֆոնի Մոնտեսորի>> դպրոցի, սաները /ԱՄՆ/: Երեխաներին բաժանել ենք երկու խմբի՝ ստուգիչ և փորձարարական: Գիտափորձի նպատակն է՝ համեմատել և ստուգել այս երկու խմբերի արդյունքները <<Ինտեգրված հոգեբանա-մանակավարժական>> մեթոդի կիրառումից հետո:

Հետազոտությունները իրականացրել ենք հետևյալ փուլերով:

1. Ճանաչողական ոլորտի ուսումնսիրություն:
2. Հուզական ոլորտի ուսումնասիրություն:
3. Մեր կողմից մշակված <<Ինտեգրված հոգեբանա-մանակավարժական>> մեթոդի կիրառում
4. Ռեթեստավորում և համեմատական վերլուծություն:

Մեր խնդիրները իրականացնելու համար հետազոտությունները անցկացրել ենք հետևյալ կերպ:

1. Ճանչողական ոլորտը ուսումնասիրելու համար կիրառել ենք Ռավենի գունավոր մատրիցաները, Ե. Տորենսի Ստեղծագործական մտածողության ախտորոշման մեթոդիկան, ընկալման, հիշողության և ուշադրության տարբեր կողմերը գնահատող մեթոդիկաներ: Այս փուլի մեր նպատակն է գնահատել երեխաների ճանաչողական գործընթացները, որից հետո իրականացնել գիտափորձ և դրանից հետո ռեթեստավորել ճանաչողական գործընթացները՝ համեմատելով ստուգիչ և փորձարարական խմբերի արդյունքները, և պարզել արդյոք արդյունավետ է մեր կողմից մշակված մեթոդը:
2. Հուզական ոլորտը ուսումնասիրելու համար օգտագործել ենք հոգեբանության ավանդական մեթոդները. դիտումը, անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդը, պրոյեկտիվ մեթոդներ՝ Ռ. Թեմփլի, Մ. Դորկիի, Վ.

Ամենի «Ընտրիր համապատասխան դեմքը» մեթոդիկան, Ռոզենցվեյգի ագրեսիվության մակարդակը ախտորոշող մեթոդիկան, որոնք երկուսն էլ պրոյեկտիվ թեստեր են: Այս ոլորտի ուսումնասիրումը մեր կողմից նպատակ է հետապնդում հասկանալու՝ արդյոք մեր կողմից մշակված մեթոդը դրական է ազդում երեխայի հուզական ոլորտի վրա: Մեր կողմից մշակված մեթոդը իր մեջ ներառում է նաև հուզական ոլորտի վրա ազդեցություն, քանի որ մենք կարծում ենք, որ հուզական ոլորտը կարևոր դեր է խաղում երեխայի անձի և ճանաչողական գործընթացների զարգացման վրա: Այս ուսումնասիրությունները ևս ենթարկվել են ռեթեստավորման և համեմատական վերլուծության ենթարկվել ստուգիչ խմբի հետ:

3. Երրորդ փուլում մեր կողմից մշակվել է ծրագիր՝ <<Ինտեգրծավ հոգեբանա-մանկավարժական>> մեթոդի:
4. Չորրորդ փուլում իրականացրել ենք բոլոր մեթոդների ռեթեստավորում և համեմատական վերլուծություն ստուգիչ խմբի հետ, որի նպատակն է եղել պարզել, թե ինչ հնարավորություններ կարող է տալ <<Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդը>> երեխաների բազմակողմանի զարգացման համար:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում կատարվել է հետազոտության արդյունքների քանակական և որակական վերլուծություն:

Ատենախոսության երրորդ գլխում՝ <<**Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդը>>,** ներկայացված է մեր կողմից մշակված մեթոդի մանրամասն ծրագիրը և ռեթեստավորման արդյունքները: նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի համար:

Ատենախոսության երրորդ գլխի առաջին՝ «Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդի ծրագիր» ենթագլխում ներկայացված է մեր կողմից մշակված մեթոդի մանրամասն ծրագիրը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի համար:

Ատենախոսության երրորդ գլխի երկրորդ՝ «Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդի ռեթեստավորում» ենագլխում ներկայացված են ռեթեստավորման արդյունքները և դրանց համեմատական վերլուծությունները ստուգիչ խմբի արդյունքների հետ:

Ինչպես արդեն նշել էինք հետազոտությանը մասնակցել են 690 (330 տղա, 360 աղջիկ) նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաներ: Ռեթեստավորման ժամանակ այս երեխաներին կիսել ենք երկու հավասար խմբերի՝ ստուգիչ և փորձարարական: Փորձարարական խմբի հետ <<Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական>> մեթոդով աշխատանքները ընթացել են ինը տարի, որից հետո իրականացվել է ռեթեստավորում: Ստուգիչ խմբի սաները չեն մասնակցել ինտեգրված հոգեբանա-մանակավարժական մեթոդով ուսումնառությանը: Ստորև ներկայացնենք ռեթեստավորման արդյունքների ամփոփ նկարագրերը և ստուգիչ խմբի հետ համեմատական վերլուծությունը:

«Անավարտ նկար» և «Տորրանսի մատրիցաները» մեթոդիկան կիրառվել է ստեղծագործական կարողությունների զարգացման հնարավորությունը գնահատելու համար:

Ինչպես տեսնում ենք ստացված արդյունքներից ստեղծագործական





ընդունակությունների զարգացման դինամիկան գրեթե նույնն է նախանական հետազոտության արդյունքների և ստուգիչ խմբի մոտ: Սակայն մենք էական տարբերություններ ենք նկատում փորձարարական խմբի հետազոտվողների մոտ, որտեղ ստեղծագործական ընդունակությունը ոչ միայն չի նվազում, այլ նաև հակառակը բարձրանում է, ինչը խոսում է այն մասին, որ մեր կողմից մշակված <<Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական>> մեթոդը նպաստել է ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:





Այստեղ նույնպես նկատում ենք, որ ստուգիչ խմբում ունենք հարաբերականորեն զարգացում, սակայն եթե համեմատում ենք փորձարարական խմբի հետ, ապա նկատում ենք, որ ունենք 6-ից 15%-ով տարբերություն: Սա վկայում է այն մասին, որ մեր կողմից մշակված <<Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական>> մեթոդը առավել լավ պայմաններ է ստեղծել ուշադրության արդյունավետության զարգացման համար:





Հոգեբանական վերլուծության ենթարկելով ուշադրության կայունության արդյունքները, մենք նկատում ենք, որ ի տարբերություն ճանաչողական մյուս գործընթացների ավանդական դպրոցներում առավել արդյունավետ զարգանում է ուշադրության կայունությունը: Սա կարծում ենք պայմանավորված է այն հանգամանքով, որ ավանդական մոտեցմամբ մանկավարժական մոտեցումը երեխայից պահանջում է համբերատար, տևական ժամանակ նստել, կատարել որոշակի գործողություններ, որը իր հերթին ունի դրական կողմ՝ զարգացնում է ուշադրության կայունությունը, սակայն պետք է նշել, որ ինտեգրված մեթոդով էլ մենք ունենք դրական և ավելի շատ արդյունք: Օրինակ՝ 10%-ով ավելի դրական տարբերություն կա փորձարարական խմբում շատ բարձր ցուցիչի մեջ, մյուս

ցուցիչներում էլ մոտ 3-5% դրական տարբերություն կա, որը կարծում ենք այնքան էլ քիչ չէ: Սա խոսում է այն մասին, որ պարտադիր չէ, որ ավանդական մեթոդով երեխայի կամքին բռնանալ և ստիպել նստել կամ կատարել պարտադրված հանձնարարություններ, կարելի է երեխային հետաքրքրել և երեխան ինքն իրեն կլանված կկենտրոնացնի իր ուշադրությունը՝ դրանով զարգացնելով համապատասխան որակները:





Ինչպես տեսնում ենք ստացված արդյունքների համեմատական վերլուծությունից, նախնանակն և ստուգիչ խմբերում արդյունքները մոտ են, ինչը վկայում է այն մասին, որ մեր նախնական ստացված արդյունքները հավաստի են, ինչպես նաև ավանդական կրթական համակարգը կարող է նպաստել նաև ճանաչողական այս գործընթացի՝ հիշողության, զարգացման վրա: Այսինքն, ունենք երկարատև կտրվածքով դրական արդյունք երեխաների մեծամասնության մոտ՝ մոտավորապես ցածր մակարդակը 70%-ից իջել է 48%-ի, բարձր ցուցիչում 5%-ից աճ ենք գրանցել մինչև 18%-ը, իսկ շատ բարձր ցուցիչում 2%-ից աճ ենք գրանցվել մինչև 12%: Սակայն առավել բարձր ցուցանիշներ ենք արձանագրել փորձարարական խմբում. Ցածր ցուցիչը մոտավորապես 70%-ից իջել է 41%-ի, բարձր ցուցիչում 5%-ից աճ ենք գրանցել մինչև 25%-ը, իսկ շատ բարձր ցուցիչում 7%-ից աճ ենք գրանցվել մինչև 20%: Այս արդյունքները խոսում ենք այն մասին, որ ավանդական դպրոցում ամբողջությամբ չի զարգանում երեխաների պոտենցյալը, իսկ ինտեգրված մոտեցման դեպքում մենք ունենում ենք շատ ավելի բարձր արդյունքներ:





Այս մեթոդով ստացված արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց տվեց նաև, որ ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդը առավել քան ավանդական մեթոդը, նպաստում է երեխաների միջանձնային հարաբերությունների լավացմանը: Այս մեթոդում առկա համագործակցային մթնոլորտը հնարավորություն է տալիս երեխաներին ավելի շատ և ազատ շփվել միմյանց հետ, դուրս է գալիս մրցակցային մթնոլորտը, որով էլ պայմանավորում ենք ագրեսիայի առկայությունը ավանդական մոտեցմամբ կրթական մոդելում: Այսպիսով, գրեթե բոլոր ցուցիչներում ունենք դրական շարժընթաց, բայց հետաքրքրական է, որ առավել էական տարբերություն է նկատվում հետաքրքրվածություն գործակցում, որը նշանակում է, որ երեխաները հետաքրքրված է ուսումնական գործընթացով:





Կետտելի <<Բազմաբորդոն անձնային հարցարանի>> միջոցով ստացված արդյունքների համեմատությունը մեզ հնարավորություն է տալիս գալ այն եզրակացության, որ <<Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական>> մեթոդը դրական է ազդում նաև անձնային առանձնահատկությունների վրա: Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ մենք դրական դինամիկա ունենք հետևյալ գործագիցներում՝ խոհեմություն, հուզական անգրգռվածություն, անկախություն, գործնականություն, խիզախություն և ինքնակառավարում:



Այս գծապատկերում տեսնում ենք երեք՝ նախնական, ստուգիչ և փորձարարական խմբերի արդյունքների համեմատությունը և հստակ երևում է, որ փորձարարական խմբում ունենք տագնապայնության նվազում, որը ևս մեկ անգամ ապացուցում է, որ ինտեգրված մեթոդը դրական է անդրադառնում անձի տարբեր ոլորտների վրա:



Այս գծապատկերում նույնպես պատկերված է երեք արդյունքների համեմատական վերլուծությունը, որտեղ ականատես ենք լինում, որ <<Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական>> մեթոդը դրական է ազդում երեխաների հուզական ոլորտի վրա, այսինքն նկատում ենք ագրեսիվության նվազում փորձարարական խմբում:

Այսպիսով, հիմնվելով մեր հետազոտության արդյունքների վրա, մենք եկանք այն եզրակացության, որ ավանդական ուսուցման մեթոդը ունի իր դրական ազդեցությունը մարդու բազմակողմանի զարգացման հարցում, բայց այդ մեթոդի բացասական արդյունքն այն է, որ եթե ճանաչողական գործընթացները քիչ թե շատ զարգանում են, ապա հետզարգացում է ունենում երեխաների ստեղծագործական ընդունակությունները, ինչպես նաև երեխաների մոտ տարիքի հետ զուգընթաց նկատվում է տագնապայնության և ագրեսիվության աճ, շփման խնդիրներ, ինքնակառավարման հմտությունների պակաս, հուզական գրգռվածություն, իսկ ի հակադրություն վերոգրյալի՝ ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդով մենք արձանագրում ենք բազմակողմանի դրական շարժընթաց, որը կարծում եմ շատ

կարևոր է, քանզի ցանկացած հասարակության զարգացման համար անհրաժեշտ է, որ սերունդները լինեն ոչ միայն զարգացած, այլ նաև հոգեպես առողջ և կրեատիվ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսական և փորձարարական վերլուծության արդյունքների հիման վրա հանգել ենք հետևյալ **եզրակացություններին**.

1. Կրթական գործընթացների արդյունավետությունը պայմանավորող մեթոդները ինչպես մանկավարժության, այնպես էլ հոգեբանական գիտության մեջ պատմական տարբեր ժամանակաշրջաններում առաջադրվել և զարգացվել են, սակայն դրանք կրում են կարծես մեկուսացած բնույթ, այսինքն Մոնտեսորին, Ռեջիո Էմիլիոն, Վալդորֆյան մոտեցումները գործել են առանձին առանձին, այնպես ինչպես բիհևյորիստական մոտեցումը, կոգնիտիվիստականը և կոնստրուկտիվիստական մոտեցումները:
2. Որպես կրթական գործընթացների արդյունավետությունը պայմանավորող մեթոդ հիմնականում գերիշխել է ավանդական ուսուցման մոտեցումները, իսկ այլ կրթական մոտեցումները դիտարկվել է այլընտրանքային, առկա չէ կոնստրուկտիվ ինտեգրացիա:
3. Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ճանաչողական որոշ գործընթացները զարգանում են ավանդական ուսուցման ընթացքում՝ հիշողություն, ուշադրության արդյունավետություն, ուշադրության կայունություն, սակայն ստեղծագործական ընդունակությունները հակառակը՝ ունեն բացասական շարժընթաց: Հուզական ոլորտում նույնպես նկատվում է ագրեսիվության, տագնապայնության աճ:
4. Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների անձնային առանձնահատկությունների և միջանձնային հարաբերությունների ոլորտում նկատվում է բացասական շարժընթաց՝ երեխաները հակված են մեկուսանալու, հետաքրքրվածությունը թույլ է ուսուցման հանդեպ, հուզականորեն գրգռվող են, անվստահ, ունեն ինքնակառավարման դժվարություններ:
5. <<Ինտեգրված հոգեբանա-մանակավարժական>> մեթոդի կիրառումը առավել արդյունավետ է նպաստում ճանաչողական գործընթացների, մասնավորապես՝ ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը:
6. <<Ինտեգրված հոգեբանա-մանակավարժական>> մեթոդի կիրառումը դրական է ազդում անձնային որոշ առանձնահատկությունների՝ ինքնակառավարում, խոհեմություն, հուզական կայունություն,

անկախություն, ինչպես նաև հուզական ոլորտի վրա՝ նկատվում է ագրեսիվության և տագնապայնության թուլացում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում.

1. Կոնջոյան Հ. Ա., Կրեատիվության զարգացման առանձնահատկությունները ոչ ավանդական ուսուցման պայմաններում, «Կաճառ» գիտական տարեգիրք, Երևան, 2020, No.1, էջ 124-130:
2. Konjoyan H.A., Avetisyan M.S., A Comparative analyzes bettween traditional and alternativ early childhood education such as maria montessori method; reggio emilia pedagogical approach, Armenian Journal of Special Education, Scientific Periodical, Yerevan, vol. 7 No. 2, 2023, P 65-77, DOI: https://doi.org/10.24234/se.v7i2.8
3. Կոնջոյան Հ. Ա., Ավետիսյան Մ.Ս., Գրիգորյան Ս., Հիշողության զարգացման հիմնախնդիրը նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքում, Գավառի պետական համալսարան, Գիտական հոդվածների ժողովածու, N18, 2025, էջ 412-421: DOI: 10.56246/18294480-2025.18-3
4. Konjoyan H.A., Avetisyan M.S., Stepanyan N. E., Attention features in preschool and younger school age, Main issues of pedagogy and psychology, Scientific Periodical, Yerevan, vol. 1 No. 12, 2025, P 29-37, DOI:10.24234/miopap.v12i1.65
5. Կոնջոյան Հ. Ա., Ավետիսյան Մ. Ս., Իսկաջյան Ա. Հ., Համացանցային դեստրուկտիվ խաղերի ազդեցությունը դեռահասների հոգեկան առողջության վրա, Շիրակի Մ. Նալբանդյանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Բ, № 1, 2024, с, էջ 134-142:
6. Կոնջոյան Հ. Ա., Մոնտեսորի մեթոդի ինտեգրումը տարրական դպրոցի երեխաների կրթական գործընթացում, «Կաճառ» գիտական տարեգիրք, Երևան, 2026, No.1, էջ 34-42:

КОНДЖОЯН ХАСМИК АЛЬБЕРТОВНА

ПСИХОЛОГИЧЕСКИЕ МЕТОДЫ, ОБУСЛОВЛИВАЮЩИЕ ЭФФЕКТИВНОСТЬ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОЦЕССОВ ДЛЯ ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО И МЛАДШЕГО ШКОЛЬНОГО ВОЗРАСТА

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.05 - «Психология развития и образования». Защита диссертации состоится 17 июля 2026 года в 12:00 на заседании специализированного

совета по психологии 064 КВОН при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна (0010, г. Ереван, Тигран Меци 17).

РЕЗЮМЕ

Актуальность исследования обусловлена тем, что в современную эпоху, в условиях стремительного развития общества, всестороннее развитие детей, понимание концепции системного знания, повышение их восприимчивости, а также формирование психической и эмоциональной гармонии приобретают все большее значение. Учитывая темп жизни, социально-экономическую ситуацию и стремление к обучению, ставшее проблемой в современном мире, приоритетной задачей является формирование альтернативного психолого-педагогического подхода, предполагающего внедрение определенных реформ в образовательный процесс. Она в значительной степени исходит от телевидения и интернета, которые кажутся ребенку более интересными и способны охватить даже поток знаний, получаемых от родителей и учителей. Такой подход также послужит основой для разработки более эффективной и всесторонней образовательной программы и методов передачи знаний, которые позволяют воспринимать, раскрывать и развивать характеристики «современного детства», делая образовательный процесс одновременно соответствующим современным требованиям и интересным и мотивирующим.

Цель исследования: экспериментально определить возрастные возможности применения «Интегрированного психолого-педагогического метода» в всестороннем развитии детей.

Задачи исследования:

1. Изучение профессиональной литературы по методам определения эффективности образовательных процессов.
2. Экспериментальное изучение познавательных процессов и эмоциональной сферы детей дошкольного и младшего школьного возраста.
3. Разработать и внедрить учебную программу с использованием «Интегрированного психолого-педагогического» метода.
4. Провести сравнительный анализ личностных характеристик и межличностных отношений детей дошкольного и младшего школьного возраста после применения «Интегрированного психолого-педагогического» метода.
5. Провести повторное тестирование параллельно с применением других методов.

Гипотеза исследования: Считается, что организация обучения с использованием «Интегрированного психолого-педагогического» метода в дошкольном и младшем школьном возрасте создает реальную возможность для развития у детей познавательных процессов, личностных качеств, эмоционального состояния и межличностных отношений, а также для преодоления интернет-зависимости.

Научная новизна исследования: Проведенное исследование представляет собой определенную новизну в области психологии развития и педагогической психологии, а также социальной, общей (способности, личность и межличностные отношения) психологии. С одной стороны, процесс развития различных сфер детей – познавательной, личностной и межличностной, эмоциональной – стал предметом научного монографического исследования, с другой стороны, роль воспитания в развитии последней стала проблемой научного изучения. Впервые «Интегрированная психолого-педагогическая» модель обучения рассматривается как средство всестороннего развития личности ребенка.

Теоретическая и практическая значимость исследования: Хотя общество всегда нуждалось в умных и знающих людях, фундаментальная проблема развития обучения в психологии в современном мире недостаточно изучена; исследования скорее сосредоточены либо на традиционных методах обучения, либо на эффективности отдельных методов. Теоретическая значимость исследования заключается в том, что выявленные психологические закономерности и подходы обогащают научное понимание личности и поведения детей в образовательном процессе, а также обосновывают необходимость дальнейшего многостороннего изучения этой проблемы.

Достоверность результатов определяется методологической обоснованностью исследования и соответствием его цели, гипотезе, задачам и применённым методам. Теоретические выводы основаны на всестороннем научном анализе экспериментальных данных.

Апробация и внедрение результатов исследования: результаты исследования были обсуждены на кафедре «Прикладной психологии» Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, а также представлены на ряде международных научных конференций.

Структура диссертации: работа состоит из введения, трёх глав, заключения, списка литературы и приложения. Объём диссертации составляет 118 страницу, без приложений – 172 страницу.

По теме диссертации опгубликовано 6 статей.

KONJOYAN HASMIK ALBERTOVNA

PSYCHOLOGICAL METHODS DETERMINING THE EFFECTIVENESS OF EDUCATIONAL PROCESSES FOR CHILDREN OF PRESCHOOL AND PRIMARY SCHOOL AGE

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in speciality 19.00.05 – “Developmental and Educational Psychology". The dissertation

defense will take place on July 17, 2026, at 12:00 PM, at the session of Degree Awarding commission 064 specializing in Psychology of the The Higher Education and Science Committee of the Republic of Armenia at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan (17 Tigran Mets, 0010, Yerevan).

SUMMARY

Actuality. The relevance of this study stems from the fact that in the modern era, amidst rapidly evolving society, the comprehensive development of children, an understanding of the concept of systemic knowledge, increased receptivity, and the development of mental and emotional harmony are becoming increasingly important. Given the pace of life, the socioeconomic situation, and the desire for learning, which has become a challenge in the modern world, the development of an alternative psychological and pedagogical approach, which involves the implementation of specific reforms in the educational process, is a priority. This largely stems from television and the Internet, which children find more engaging and can even absorb the flood of knowledge received from parents and teachers. This approach will also serve as the basis for developing a more effective and comprehensive educational program and methods of knowledge transfer that allow for the perception, development, and development of the characteristics of "modern childhood," making the educational process both relevant to modern requirements and engaging and motivating.

The research aims to experimentally to experimentally identify the age-specific possibilities of applying the “Integrated Psychological-Pedagogical Method” in the all-round development of children.

The objectives of the research.

In order to achieve the aim of the research, the following objectives have been formulated:

1. To review professional literature on methods for determining the effectiveness of educational processes.
2. To experimentally study the cognitive processes and emotional sphere of preschool and primary school-age children.
3. To develop and implement a curriculum using the "Integrated Psychological-Pedagogical" method.
4. Conduct a comparative analysis of the personality traits and interpersonal relationships of preschool and primary school children after the implementation of the "Integrated Psychological and Pedagogical" method.
5. Conduct retesting in parallel with the use of other methods.

Research Hypothesis.

It is believed that organizing teaching using the "Integrated Psychological-Pedagogical" method in preschool and primary school age creates a real opportunity for

the development of children's cognitive processes, personal characteristics, emotional state and interpersonal relationships, as well as overcoming Internet addiction.

Scientific novelty of the research.

The study represents a significant breakthrough in the fields of developmental and educational psychology, as well as social and general psychology (abilities, personality, and interpersonal relationships). On the one hand, the development of various areas of children—cognitive, personal, interpersonal, and emotional—has become the subject of a scientific monograph. On the other hand, the role of education in the development of the latter has become a topic of scientific study. For the first time, the "Integrated Psychological and Pedagogical" model of education is considered as a means of comprehensively developing a child's personality.

Teoretical and practical significance of the research.

Although society has always needed intelligent and knowledgeable people, the fundamental problem of developing training in psychology in the modern world has been understudied; research has tended to focus either on traditional teaching methods or the effectiveness of specific methods. The theoretical significance of the study lies in the fact that the identified psychological patterns and approaches enrich the scientific understanding of children's personality and behavior in the educational process and substantiate the need for further comprehensive study of this issue.

Credibility of results.

Reliability of the study findings is determined by their methodological validity and their correspondence to the research purpose, hypothesis, objectives and methods. The theoretical conclusions are based on a comprehensive scientific analysis of the experimental data.

Approbation and adoption of the research results.

The results of the research were discussed at the Department of Applied Psychology of Khachatur Abovyan Armenian State Pedagogical University, as well as at several international scientific conferences.

Structure of the dissertation.

The work consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references, and appendices. The volume of the dissertation is 172, and 118 pages without appendices.

Six articles have been published on the topic of the dissertation.